

ՓՇՐՈՒԱԾ ՔՆԱՐ

(ԵՂԵՐԵՐԳ ԴՈՒՐԵԱՆԻ)

ԵՐԿՐՈՐԴ ԵՂԱՆԱԿ

ՎԵՐՋԱԼՈՅՍԻ ՏՂԱՆ

Վերջալոյսի տըղան է,
Որ կը մարի դալկահար.
Վերջալոյսի ճաճանչն է,
Որ կը մեկնի հորիզոնէն տրամալար:

Դեռ կը հըծծեն զեփիւռներ
Չամլըճայի բարձունքին,
Կու լան տրտում սեւ շուքեր՝
Երբ փողփողեն յետին շողերն արեւին:

Տերեւներու շրթներէն
Դեռ կը լսուին մրմունջներ,
Որ թախծադին կը պատմեն
Մեռած սէրերն, այրած սրտին լուռ ցաւեր:

Երբ ծաղիկները ժըպտին
Եւ մարդերուն վրայ բաղմի
Չմրուխտ հանդերձը դաշտին՝
Դուն հոն ես միշտ, հին յուշերովդ սիրողի:

Ամէն գիշեր՝ լուսաշիթ
Վար կը կաթին աստղերէն
Կոյս արցունքներ երազիդ,
Որ պճնեցին հոգւոյդ երկինքն հըրեղէն:

Դողդոջ քայլիդ հէգ զարկեր
Պաղլար Պաշի կամ Մօտա,
Սիրոյ երգիդ տրոփիւններ
Դեռ կը հնչեն, երբոր քընար մը կու լայ:

ՍԵՒ ԿԱԹԸ

Գինեփրփուր եւ յորդազեղ բաժակէն
Շիթ մը չառաւ ծարաւ շրթունքդ հիւծախտի.
Ու խմեցիր շիրիմներու սեւ կաթէն,
Տփույն ճակատդ հանգչեցուցած մայր հողի:

Գիշերներէն դուն ըմպեցիր լոկ խաւար,
Ու սիրեցիր նոճիներ, սե՛ւ յուշարձան
Քու որբութեան եւ այն ճամբուն առապար,
Որ կը նայէր դերեղմանի մըթութեան:

Մինչ դարուններ կը ժպտէին ուրիշին,
Եւ կը յորդէր կեանքն, արեւոտ վարդաւառ,
Ինչո՞ւ քեզի փուշերը լոկ մընացին,
Եւ ցուրտ ձըմեռն ամպոտեց աչքդ անծայր:

Գիտեմ, հեւա՛ց սիրտըդ հեծքով մահերգակ,
Ու մոխրացան տենչանքներուդ մատեաններ,
Երակներէդ թոյն հոսեցաւ, սեւ կըրակ,
Այդըդ դարձուց տառապանքի մութ գիշեր:

Մայիսն ինչո՞ւ, բուրումներու այդ ամիս,
Համբոյր մը գէթ չըբերաւ քեզի արեւէն,
Եւ ոչ գըղուանքը վարդ այտի մը ամբիծ,
Որ դար սրբել արցունքդ, ըլլալ ապաւէն:

Ձեռքերուդ վրայ բռնած հողւոյդ աւերակն,
Ի՛նչպէս լալով անցար դու սեւ հովիտէն,
Լոյսի կարօտն, անմահութիւնն ու հաւատք՝
Հնչեց երգիդ համաշխարհիկ լարերէն:

Ճակատդ ըրած վերելքներու պատուանդան,
Երազեցիր հորիզոնէն բարձրանալ,
Բայց հափափեց քեզ կախարդող դերեղմանն,
Ու ափիդ մէջ մեռաւ յոյսիդ թըռիչքն ալ:

ԱՍՏՂ Մ'ԱԼ ԵՍ

Աստղ մըն ալ ես, գոչեց սրտէն վիրաւոր,
Անոյշ տըղան մահամերձ,
Դատարկուած էր սրտին սափորն հունաւոր,
Կ'ուզէր լեցնել աստղերով:

Աստղ մըն ալ ես... կ'երթամ ըլլալ կապոյտին
Մարգերուն վրայ ծաղկաթոյր,
Անհունի ծովն իյնալ, կառչիլ երկնքին՝
Երգելու սէր ու ժըպիտ:

Մարդիկ ճակատըս պճնեցին դափնիով,
Լոկ յիշատակ վաղանցուկ.
Կ'ուզեմ ըլլալ անհունի վարդն հըրաշքով,
Յաւերթօրէն անթառամ:

Լուսազարդուի՛ր յոգնած ճակատս քերթողի,
Շողերու բոց հրթիռէն,
Երկրիս վըրայ լոկ փշեպսակ մը տըւին,
Որ պատուեց սիրտս ու հոգիս:

Երթամ ըլլալ վերն աչք, լապտեր խաւարի,
Առաջնորդ կոյր սրտերու.
Վառիմ, այրիմ անոնց համար՝ որ ինծի
Պէս նայեցան փոսերու:

Ու ցանեմ լա՛յն անդաստանէն աստղերուն՝
Մարգարիտներ լուսազարդ,
Հէզ հոգիներ տեսնեն երկինք մը ժպտուն
Իրենց մըռայլ կեանքէն վեր:

Ա՛հ, դու երկինք, սրտի անփակ դարբերայ,
Կայծերուդ լոյս ցայտեցրով
Գրկէ հոգիս, շատըրուանէ՛ր զայն հիմա,
Յաւերս շողի փոխելով:

ՇՈՒՇԱՆ ՄԸ ՏՈՒԷՔ

Գիշե՛ր երկար, գիշեր թափուր,
Մենարանիս մէջ առանձին,
Ես պատարագ եւ գոհը լուռ
Ձեռքերս ուղղած պաղատագին:

Կը կաղկանձէ հովը վայրագ,
Ու կը ծեծէ լուսամուտս հին,
Եղերական եւ անառակ
Ի՛նչ վայնասուն՝ ողբերգն հովին:

Կը սարսափին խոհերս ամէն
Եւ հորիզոնս ալ կ'ամպոտի,
Ա՛հ, կը վախնամ մահուան անցքէն՝
Որ չըլլայ թէ դըրանս նայի:

Այս հովիտէն ես կը մեկնիմ,
Տըւէք շուշան մը ձեռքիս վրայ.
Կարմիր վարդին տեղ մըտերիմ՝
Թող ձեռքս ամբիծ սէր ունենայ:

Հուր նայուածքներ, շունչ ծաղկատի
Ձեկան այցի ափունքներուս,
Բայց ես սիրող բիլ կապոյտի,
Հոն պիտ' դռնեմ ե՛ւ սէր ե՛ւ լոյս:

ՅԵՏԻՆ ԱԻԱՆԴԸ

Խունկ ու աղօթք կը շնչէր
Սենեակն այն մութ, դարձած տաճար խորհուրդի.
Մոմի առկայծ լոյսերուն տակ կը հեւա՛ր
Քերթողին սիրտն ալեւոր,
Գարնանային յորդութեան մէջ ծըփանուտ:

Պատուհանէն տրտմագին
Յանկարծ աստղեր ներս խուժեցին արցունքով
Կայծ տալու, շունչ տալու տենդոտ երազին,
Մարաւած սիրտն, յաւերթութեան անձուկով,
Ըմպեց կեանքի ճառագայթ:

Ձարկաւ խենթ հով մ'աշունի
Փռքիկ դռնակն, որուն ետեւ կը ննջէր
Սարսուռ հագած մարմին մ'հրափայլ ու բիւրեղ,
Անդրադարձ երգ լոյսերու,
Գրկելով յոյսն՝ իբրեւ վերջին ապաւէն:

Եղերերդ մ'էր արցունքի
Մահուան քամին, սրտակեղեք ու դաժան,
Որ կը շրջէր հոն՝ որպէս սուգ տարածամ,
Ի տես փշրուած քնարի,
Ձեռքի մը վրայ, ուսկից փախած էր վախէն՝
Սիրոյ ճերմակ աղաւնին:

Կ'երթամ, ըսաւ, թող Դուրեանն
Անմահ մընայ՝ կակուղ, թեթեւ հողին տակ.
Ըլլայ շիրմէն նայող մարմար արեգակ:
«Կեանք տըւէք, թող մեծնան
Կայծերն հոգւոյս, ծընած մանուկ հանճարէն».
Օր մը անոնք կրնան սրտեր հրդեհել:

ՍԵՒ ՀԵՂԵՂ

Ծովն իր հառաչն ունի, նետուած անհունին,
Եւ փոթորիկն իր մըռնչիւն նենդաւոր.
Անդունդն ի վար թաւալող ծառ մ'էր հողին,
Ո՞վ կարող էր բռնել վայրէջքն ահաւոր:

Մըռայլ գիշեր մ'յանկարծ լացաւ հէգ Դուրեան,
Խորտակուած էր ամբարտաւն իր յոյսերուն.
Վայրադուծիւնը հեղեղին դիւակաւ
Ալիք ալիք կու տար հարուած կողերուն:

Սեւ թաւալում, տառապալիքն ահազանդ,
Ափը սրտին կը ծեծէին այդ գիշեր.
Խորտակման երգն, անկրկնելի արձագանդ,
Երկնքին դէմ անէծքի պէս կը ժայթքէր:

Ահազանդի սարսափելի հրդեհ կար,
Տրտունջն հսկայ, բոցավառուած դանկին տակ,
Անհունութեան դաշտին վըրայ անըսպառ,
Կը թափառէր իբրեւ զինուած խուլ կոչնակ:

Երբ մայրենի խոշոր շիթեր արցունքի
Այրեցին վարդն իր այտերուն թառամած,
Պըտուտքեցաւ խորքէն մըրիկ մ'ամեհի...
Աւերակ էր շուրջն եւ հողին տապալած:

Երկինք նետուած ճիչ եւ ակնարկ խուսափուկ,
Կրակէ բառեր, դամուած ճակտի մը հրաչէկ,
Սեւ դառանցանք՝ որ հաղադին մէջ խեղդուկ,
Կարապի երգն էր, ճամբուն վրայ յուտաբեկ:

Ու բարձրացաւ ձայնը քնարին դալարուն,
Դէպի դաշտերն այն անծանօթ դալիքին,
Երկինքն էր փակ, ցուրտ, անբարբառ մըթութիւն,
Որուն զուր տեղ կը պոռար խեղճ պատանին:

ԿՈՒԻՒՆ ԵՏՓ

Տփուոյն արծիւ թեւաբեկ, ո՞ւր կը փնտռես,
Երկինքներու բոց կայծեր,
Ծոցըդ նայէ՛, ի՞նչպէս կ'այրին տարփակէդ,
Անէծք դարձած հոյլ մ'աստղեր:

Անհունութեան ծովուն վըրայ՝ խոր գիշեր,
Երբ կը նաւէր իր հողին,
Լեռնանման ալիքներէ տարուբեր՝
Ինկաւ, դողաց սարսափին:

Ովկեան մ'էր կուրծքն, յուզումներու հըրաբուխ
Հառաչանքի ծըփանքով.
Կը բարձրանար ու կ'իջնէր միշտ սրտաբուխ,
Կեանքի, մահուան պայքարով:

Կը հանգչի այժմ անկողնին վրայ երկաթեայ
Սիրտ մը փափուկ թռչունի.
Հիւժած մարմին, որ թեւ ունի գերերկրեայ,
Սակայն հողին կը փարի:

Կը հեծկլտայ ու կը մըխայ հեւասպառ,
Վերջին ցոլքովը մտքին.
Ճակտին վրայ է նստած սեւ ամպ ու սեւ քար,
Աչքեր փոսին կը նային:

